



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՐԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱԽԹԵԱՆԻ № 3.

Նեոսիմոս Անդրեևի
Լ. ԱՆԴՐԵՅԵՒ

Քրիստոսյան

ԱՆԴՈՒՆԴԸ

~~278~~

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՍԻՄ. ԲՍԲԻՆԱՆ.



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ԹԻՆԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1904.

891.71
U-57

2

1007

Հայ
5991

17 JUL 2006
J. J. J.

№ 3 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱԻԹԵԱՆԻ № 3.

19 NOV 2010

891.71
Ա-57

Լ. ԱՆԴՐԷԵՒ

Ա Ն Դ Ո Ւ Ն Դ Ը

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՍԻՍ. ԲՍԱԻԵՍՏ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏԳՍՐԱՆ»
1904.

Доз. цензурою. С.-Петербургъ, 7-го Мая 1904 года.


Пушкинская Скоропечатня, Тел. 1000, № 4.

ԱՆԴՈՒՆԴԸ

(Լէօնիդ Անդրէէի)

I.

Օրն արդէն վերջանում էր, իսկ նրանք երկուսը միշտ գնում էին, միշտ խօսում և չէին նկատում ոչ ժամանակը, ոչ ճանապարհը: Առջևում՝ զառիվայր բլրի վրայ սեին էր տալիս մի փոքրիկ ծառաստան, և ծառերի ճիւղերի միջից, կարմիր՝ շիկացած ածուխի նման վառում էր արեգակը, վառում էր օդը և նրան ամբողջովին հրաչին ոսկեգոյն փոշի էր դարձնում: Այնպէս մօտիկ էր և այնպէս պայծառ էր արեգակը, որ շուրջն ամէն ինչ ասես կորչում էր, իսկ նա էր միայն մնում, ներկում ճանապարհը և հարթում նրան: Գնացողների աչքերն սկսեցին ցաւել, նրանք ետ դարձան, և իսկոյն ամեն ինչ նրանց առջև մարեց, դարձաւ խաղաղ և պարզ, փոքրիկ և մեկին: Ուր որ հեռւում, մի վերստ կամ աւելի առաջ, կարմիր վերջալուստ կորցել էր եղևնու բարձր



3766-82

բունը և սա վառուում էր կանաչի միջին՝ ինչպէս մի ճրագ մթին սենեակում. ծիրանագոյն փառով էր ծածկուել առջևում ճանապարհը, որի վրայ այժմ իւրաքանչիւր քար գցում էր էրկայն սև ստուեր, ու ոսկէգոյն-կարմիր լուսապսակի նման փայլում էին աղջկայ՝ արեգակի ճառագայթներով թափանցուած՝ մագերէ: Մի բարակ խուճուճ մաղ բաժանուել էր միւսներին և ոլորում ու երերում էր օդում՝ ոսկի սարգենու նման:

Եւ այն, որ առջևում մթնել էր, չ'ընդհատեց ու չր փոխեց նրանց խօսակցութիւնը: Նոյնպէս պարզ, մտերմական ու հանդարտ նա հոսում էր խաղաղ հոսանքով և միշտ մի բանի մասին էր՝ սիրոյ ոյժի, գեղեցկութեան ու անմահութեան մասին: Նրանք երկուսն էլ դեռ շատ շահել էին. աղջիկը միայն տասնեօթ տարեկան էր, Նեմովէցիին չորս տարով մեծ, և նրանք երկուսն էլ աշակերտական համազգեստ էին հագած. մէկը դիմնադիտակայի կինամոնագոյն համեստ զգեստ, միւսը տեխնոլոգ-ուսանողի գեղեցիկ համազգեստ: Եւ ինչպէս խօսակցութիւնը, նրանց մէջ ամեն ինչ շահել էր, գեղեցիկ ու մաքուր. բարեկազմ, ճկուն մարմին, ասես օդով թափանցուած և հարազատ, թեթև ձգական քայլուածք և թարմ

ձայն, որը նոյն իսկ հասարակ խօսքերում հրնչում էր մտածկոտ քնքշութեամբ, այնպէս՝ ինչպէս հնչում է առուն դարնանային խաղաղ գիշերին, երբ տակաւին բոլոր ձիւնը չէ չքացել մթին դաշտերից:

Նրանք գնում էին, շրջում էին այնտեղ, ուր շրջում էր անձանօթ ճանապարհը, և երկու երկայն՝ հետզհետէ բարակացող ստուերներ, որոնք ծիծաղելի էին փոքրիկ գլուխների պատճառով, մերթ բաժան շարժում էին առջևից, մերթ կողքից միանում, մի նեղ ու երկայն՝ սօսու ստուերի նման շերտ էին դառնում: Բայց նրանք չէին տեսնում ստուերները և խօսում էին, և խօսելիս պատանին չէր հեռացնում իր աչքերը աղջկայ գեղեցիկ գէմքից, որի վրայ վարդագոյն վերջալոյսը կարծես թողել էր իր քնքուշ ներկերի մի մասը, իսկ աղջիկը վաչք էր նայում՝ շաւղին, հրում էր հովանոցով փոքրիկ քարերը և հետևում, ինչպէս մութ զգեստի տակից հաւասարապէս դուրս էին գալիս փոքրիկ ոտնամաններից մերթ մէկի, մերթ միւսի սուր ծայրը:

Ճանապարհը կտրում էր փոշոտ, քայլելուց թափուած ծայրերով առուն, և նրանք մի բոսայէ կանգնեցին: Զինուկան վերցրեց գլուխը,

մշուշապատ հայեացքով նայեց շուրջը և հար-
ցրրեց:

— Դուք զիտէք, ուր ենք մենք: Ես այս-
տեղ ոչ մի անգամ չեմ եղել:

Նեմովէցկին անուշաղիւր շրջանայեց տեղը:

— Այո՛, զիտեմ: Այնտեղ, այն բլրի ետև՝
բաղաքն է: Տուէք ձեր ձեռքը, ես ձեզ կ'օգնեմ:

Պատանին մեկնեց իր անաշխատ, կնոջ
ձեռքի նման բարակ և սպիտակ ձեռքը:

Զինոջկան ուրախ էր, նա ուզում էր
ցատկել առուի վրայից մենակ, վաղել, կանչել՝
«հասէ՛ք ետևիցս» — բայց զսպեց իրան, վսեմ
շնորհակալութեամբ փոքր ինչ թեքեց զուլիւր
և մի քիչ վախկոտութեամբ մեկնեց ձեռքը,
որ պահպանուած էր դեռ մանկական ձեռքի
քնքուշ փքուածութիւնը: Իսկ Նեմովէցկին
ուզում էր մինչև ցաւելլ սեղմել այդ սարսու-
լի ձեռիկը, բայց նա էլ զսպեց իրան, կէսող-
ջոյնով, չարզանքով ընդունեց այն և համես-
տութեամբ շուռ տուեց աչքերը, երբ բարձրա-
ցող աղջկայ ոտքը փոքր ինչ բացուեց:

Եւ դարձեալ նրանք դնում էին և խօսում,
բայց նրանց զուլիւրները լի էին րուպէապէս մեր-
ձեցած ձեռքերի հպման զգացմունքով: Աղջիկը
դեռ զգում էր պատանու ափի և ամուր մա-
տերի չոր տաքութիւնը, նրան ախորժելի էր

և մի քիչ ամօթ, իսկ պատանին զգում էր
նրա փոքրիկ ձեռքի խոնարհ կակղութիւնը և
տեսնում սև սիլուէտը և փոքրիկ ոտնամանը,
որ պարզամիտ ու քնքուշ զրկում էր նրան:
Եւ կար մի ինչ որ սուր, անհասգիստ բան այդ
սպիտակ շրջազգեստի նեղ զօլի և վայելչակազմ
ոտքի աննսեմ ներկայացման մէջ, և կամքի
անզիտակից հիզով նա մարեց նրան: Եւ այն
ժամանակ նա ուրախացաւ, և նրա սիրան ու
կուրծքը այնպէս ազատ էին, որ ուզեց երգել,
ձեռքերով ձուլել զէպի երկինքը և կանչել.
«վաղեցէք — ձեր ետևից հասնեմ» — անտառների
և որոտացող ջրվէժների միջի նախնական սի-
րոջ այս հին ֆօրմուլան:

Եւ բոլոր այս ցանկութիւններից արտա-
սուքներ էին մօտենում կոկորդին:

Երկայն, ծիծաղելի ստուերները չքացան
և համբի փոշին դառաւ մոխրագոյն և սառը,
բայց նրանք չընկատեցին այդ և խօսում էին:
Նրանք երկուսն էլ կարգացել էին շատ լաւ
զրքեր, և սիրոյ, անարատ սիրոյ համար տան-
ջուող և կորչող մարդկանց պայծառ պատկեր-
ները անցնում էին նրանց աչքերի առաջից:
Յիշողութեան մէջ չառնում էին չը զիտես թէ
երբ կարգացուած բանաստեղծութիւնների հա-
տուածներ, որոնք զգեցնում էին սէրը՝ հնչուն

ներդաշնակութեան և քաղցր թախծի հանդերձով:

— Դուք չէք չիշու՞մ, որտեղից է սա,— հարցրեց Նեմովէցկին միտք բերելով. «... և նորից ինձ հետ է նա, որին ես սիրում եմ, որից, առանց մի խօսք ասելու՝ ես ծածկեցի իմ բոլոր թախիժս, բոլոր քնքշութիւնս, բոլոր սէրս... »:

— Ոչ,— պատասխանեց Զինոչկան և մրամտալով կրկնեց. — «բոլոր թախիժս, բոլոր քնքշութիւնս, բոլոր սէրս... »:

— Բոլոր սէրս, ահամայ արձադանքով ձայնեց Նեմովէցկին:

Եւ նորից չիշու՞մ էին նրանք: Յիշու՞մ էին սպիտակ շուշանների պէս մաքուր աղջիկներին, որոնք հագնու՞մ էին միանմանու սև զգեստ, միայնակ թախծում աշնանային տերևներով ծածկուած պարկու՞մ, երջանիկ իրանց անբաղդութեան մէջ. նրանք չիշու՞մ էին և հպարտ, էներգիական, բայց տանջուող և սէր ու կանացի նրբազգաց կարեկցութիւն խնդրող այր մարդկանց: Վշտալի էին չարուցուած մտապատկերները, բայց նրանց վշտոտութեան մէջ սէրն երևան էր զալիս աւելի պայծառ և մաքուր: Ահագին, ինչպէս աշխարհը, պայծառ, ինչպէս արեգակը, և զմայլելի զեղեցիկ էր

ձեանում նա նրանց աչքերի առջև, և նրանից աւելի հղօրեղ և զեղեցիկ ոչինչ չը կար:

— Դուք կը կարողանայի՞ք մեռնել ձեր սիրած անձի տեղ,— հարցրեց Զինոչկան՝ նայելով իր կիսամանկական ձեռքին:

— Այո՛, կը կարողանայի,— վճռաբար պատասխանեց Նեմովէցկին, բաց և անկեղծ նայելով աղջկայ վրայ:— Իսկ դո՞ւք:

— Այո՛, ես էլ,— նա մտասուզուեց:— Այլը այդ այնպիսի երջանկութիւն է՝ մեռնել սիրած մարդուդ տեղ: Ես շատ կ'ուզէի:

Նրանց աչքերը՝ պարզ, լսազող՝ հանդիպեցին և մի ինչ որ լաւ բան ուղարկեցին իրար և շրթունքները ժպտացին: Զինոչկան կանգ առաւ:

— Կացէք,— ասաց նա, — ձեր տուժուրկայի վրայ դերձան կայ:

Եւ վստահութեամբ բարձրացրեց ձեռքը դէպի նրա ուսը և զգուշութեամբ, երկու մատով առաւ դերձանը:

— Ահա՛, — ասաց նա և, լուրջ դէմք ընդունելով, հարցրեց. — Ինչո՞ւ դուք այդպէս զրժգոյն էք և նիհար: Դուք շատ էք զբաւու՞մ, այո՞: Մի յոգնեցնէք ձեզ, պէտք չէ:

— Ձեր աչքերը կապոյտ են, իսկ նրանց մէջ կայծիկների նման պայծառ կէտեր կան,

— պատասխանեց Նեմովէցիին՝ զննելով նրա
աչքերը:

— Իսկ ձերը սև են: Ոչ, շագանակագոյն,
տաքուկ: Եւ նրանց մէջ...

Զինոչկան չը վերջացրեց, թէ ինչ կայ նրանց
մէջ, և դարձրեց երեսը: Նրա դէմքը դանդաղ
կարծրում էր, աչքերը դառան շիտթուած և
երկչոտ, իսկ շրթունքներն ակամայ ժպտում
էին: Եւ չը սպասելով ժպտացող և ինչ որ
բանից բաւական Նեմովէցիուն, նա առաջ շար-
ժուեց, բայց շուտով կանգ առաւ:

— Նայեցէք, արեւը մայր մտաւ.— Խիտը
դարմանքով բացականչեց նա:

— Այո, մայր մտաւ,— յանկարծակի ու
սուր Խիտը թեամբ ձայն տուեց պատանին:

Լոյսը հանդաւ, ստուերները մեռան, և
շուրջն ամեն ինչ դառաւ տժգոյն, համր և ան-
կենդան: Այնտեղից, ուր առաջ փայլում էր
շիկամած արեղակը, անաղմուկ դէպի վեր էին
սողում ամպերի մթին շեղջեր և քայլ առ քայլ
կլանում էին պայծառ— կապոյտ տարածու-
թիւնը: Ամպերը լայնանալով բարձրանում էին,
ընդհարւում, դանդաղ ու ծանր փոխում էին
արթնացած հրէշների ձևերը և դժկամակ շարժ-
ւում էին առաջ, ասես հէնց իրանց, սեփական
կամքին հակառակ, բշուժ էր ինչ-որ անողոր,

ահարկու ոյժ: Պատառուելով միւսներից, միայ-
նակ այս ու այն կողմն էր ընկնում պայծառ
մազմզուկոտ ամպիկը՝ թույլ և ահաբեկ:

II.

Զինոչկայի այտերը տժգնեցին, շրթունք-
ները կարմիր դառան, համարեա արնագոյն,
բիբն աննշմար լայնացաւ՝ մթնեցնելով աչքերը,
և նա կամացուկ շնչաց.

— Ես վախենում եմ: Այստեղ այնպէս հան-
դարտ է: Մենք մոլորուեցի՞ր՞ք:

Նեմովէցիին կիտեց թաւ յօնքերը և քննո-
ղաբար շրջանայեց տեղը: Առանց արեղակի,
մօտակայ գիշերի թարմ շնչառութեան ներքոյ՝
նա թուում էր անբարեհամբօյր և սառը. դէպի
ամեք կողմ տարածւում էր մոխրագոյն դաշտը
ցածիկ, ասես կոխկրտուած արօտով, կաւային
ծորերով, թուժբերով և փոսերով: Փոսեր շատ
կային՝ խորունկ, ուղղածիղ և փոքր, ծածկուած
մազլցուն արօտով. նրանց մէջ դիշերելու հա-
մար պառկել էր արդէն լոխկ աղջամուղջը. և
այն, որ այստեղ մարդիկ կային, մի բան էին
անում, իսկ այժմ նրանք չը կան, ևս աւելի
անապատ և Խիտը էր դարձնում տեղը: Այն-
տեղ և այստեղ, ինչպէս մանիշակագոյն, ցուրտ

մշուշի թանձրութիւններ, բարձրանում էին ծառաստաններ և անտառամասեր և կարծես սպասում էին, թէ աչքաթող եղած փոսերն ի՞նչ կ'ասեն իրանց:

Նեմովէցիկին ճնշեց անհանգստութեան ծանր ու շփոթ զգացմունքը, որ բարձրանում էր իր մէջ և ասաց.

— Ոչ, մենք չենք մոլորուել: Ես գիտեմ ճանապարհը: Առաջ դաշտով, իսկ յետոյ այն անտառիկով: Դուք վախենում էք:

Աղջիկը քաշաբար ժպտաց և պատասխանեց.

— Ոչ: Այժմ ոչ: Բայց պէտք է շուտով տուն գնալ— թէյ խմել:

Արագ և վճռաբար նրանք առաջ շարժուեցին, բայց շուտով դանդաղացրին քայլերը: Նրանք չէին նայում իրանց շուրջը, բայց զգում էին հաղարաւոր անշարժ աղօտ աչքերով իրանց շրջապատող փորփրուած դաշտի դաժան թըշնամանքը, և այդ զգացմունքը մօտեցնում էր նրանց և ձգում մահկութեան չիշողութիւնների մէջ: Եւ չիշողութիւնները պայծառ էին, լուսաւորուած արեգակով, կանաչ տերեւների, սէրով և ծիծաղով: Ասես դա կեանք չէր, այլ լայն, մեղմ երդ, և նրա միջի ձայներն իրանք էին՝ երկու փոքրիկ նօտեր. մէկը հնչուն և

պարզ, ինչպէս հնչող բիւրեղ, միւսը մի քիչ խուլ, բայց աւելի պայծառ՝ ինչպէս զանդակը:

Երեւացին մարդիկ—երկու կանայք՝ նրստած խորը կաւեայ փոսի ծայրին. մէկը նստած էր մէկ ոտքը միւսի տակ ծալած և ուշի ուշով նայում էր ներքև. զլսի թաշկինակը բարձրացել էր, բանալով խճճուած մաղերի խոպոպները. կռնակը կռանում էր և վեր էր քաշում կեղտոտ, վրան խնձորների չափ խոշոր ծաղիկներ նկարուած և կապերը քակ կօփտան: Անցնողների վրայ նա չը նայեց: Միւս կինը կէսպտուկած էր նրա մօտ, զլուխը ետ ձգած: Նրա դէմքը կոպիտ էր, լայն, առնական գծերով, և աչքերի տակ դուրս ցցուած այտոսկրների վրայ վառուած էին երկ-երկու կարմիր աղիւսազոյն բծեր՝ թարմ դարկանիչների նման: Սա աւելի կեղտոտ էր, քան առաջինը, և նայում էր եկողների վրայ ուղղակի և պարզ: Երբ նրանք անցան, նա երգեց թանձր, առնացի ձայնով.

— Մենակ քեզ համար, ո՞վ իմ սիրական, Ծաղկում էի ես՝ հոտոտ ծաղկի նման...

— Վար՛կա, լսում ես,— դարձաւ նա լուսկաց ընկերուհուն և պտտասխան չրստանալով՝ բարձր ու կոպիտ կերպով հոհոաց:

Նեմովէցիկին ճանաչում էր այդպիսի կանանց՝ կեղտոտ նոյնիսկ այն ժամանակ, երբ

նրանց հագին լինում էր հարուստ և զեղեցիկ զգեստ, ընտելացել էր նրանց, և այժմ նրանք սահեցին նրա հայեացքով և, հեաք անգամ չը թողնելով, չքացան: Բայց Զինուկան, որ համարեա քսուել էր նրանց իր կինամոնազոյն համեստ զգեստով, զգաց մի ինչ որ թշնամական, արգահատելի և չար բան, որ բուպէսպէս մտաւ իր հոգու մէջ: Բայց մի բանի բուպէից տպաւորութիւնը հարթուեց, ինչպէս ամպի ստուեր, որ արագ վազում է ոռիւկոյն մարզի վրայով, և երբ նրանց ետեից համեկով՝ առջև անցան երկու հոգի՝ մի այր-մարդ՝ կարտուղ և պիտակ հազած, բայց ոտաբորիկ և նոյնպէս կեղտոտ կին-մարդ, նա տեսաւ նրանց, բայց չը զգաց: Հաշիւ չը տալով իրան, նա ղեռ երկար նայում էր կնոջ ետեից, և նա մի քիչ դարմացաւ, թէ ինչու կնոջ զգեստն այնպէս բարակ է, մի տեսակ կպչուն, ասես թաց լինէր, ոտքերը գրկող, և քղանցը՝ գործուածքի մէջ խրուած իւղոտ կեղտի լայն շերտ ունի: Մի ինչ որ անհանդստացնող, ցաւալի և սարսափելի անյուսալի բան կար այդ բարակ և կեղտոտ քղանցի այս տարուբերուելու մէջ:

Եւ նորից նրանք զնում էին և խօսում, իսկ նրանց ետեից գծկամութեամբ շարժուում էր մութ ամպը և գցում թափանցիկ, զգուշ ընկ-

նող ստուեր: Ամպի լայնացած կողքերում աղօտ կերպով երևում էին պղնձագոյն բծեր և պաշտառ, անաղմուկ ոլորուող շաւիղներով ծածկուում էին նրա ծանր դանդուածի ետև: Եւ խաւարը թանձրանում էր այնպէս աննկատ և գաղտագողի, որ դժուար էր նրան հաւատալը, և թւում էր, որ այդ ղեռ ևս օր է, բայց ծանր հիւանդ և խաղաղ մեռնող օր: Այժմ նրանք խօսում էին այն սարսափելի զգացմունքների և մտքերի մասին, որոնք այցելում են մարդուն գիշերով՝ երբ նա չէ քնած, և ոչ ձայն, ոչ խօսակցութիւն չէ խանդարում նրան, և այն՝ խաւարի պէս լայնը և բայմաաչքը, որը կեանք է, պինդ հպւում է նրա հէնց երեսին:

— Դուք երեւակայնում էք ձեզ անհունութիւնը,—հարցրեց Զինուկան, զնելով փափրիկ ձեռքը իր ճակատին և ամուր գոցելով աչքերը:

— Ոչ: Անհունութիւնը... Ոչ,—պատասխանեց Նեմովեցիկին, նոյնպէս փակելով աչքերը:

— Իսկ ես երբեմն տեսնում եմ նրան: Առաջին անգամ ես տեսայ, երբ ղեռ փոքրիկ էի: Դա ասես թէ սալեր է: Կանգնած է մի սալը, միւսը, երրորդը և այդպէս հեռու, ան-

վերջ, միշտ սալեր, սալեր... Սոսկալի է,—նա ցնցուեց:

— Բայց ինչո՞ւ սալեր, — ժպտաց նեմով էցկին, թէև նրան անախորժ էր:

— Զր գիտեմ: Սալեր: Մէկը, միւսը... անվերջ:

Խաւարը գաղտադողի թանձրանում էր, իսկ ամպն արդէն անցել էր նրանց գլուխների վրայով և առջևից ասես նայում էր նրանց դժգնած, վայր կախած դէմքերին: Եւ հետը հետէ յաճախ էին յայտնուում պատառոտուն կեղտոտ կանանց մութ ձեւերը, ասես նրանց դուրս էին գցում խորունկ, չը գիտես ինչու փորուած փոսերը, և անհանդիստ կերպով այս ու այն կողմ էին շարժուում նրանց թաց քղանցները: Մերթ միայնակ, մերթ երկ-երկու, մերթ երեք-երեք հողի յայտնուում էին նրանք, և նրանց ծայները հնչում էին սառած օդում բարձր և անսովոր միայնակ:

— Ովքե՞ր են այդ կանայք: Որտեղից են այդքան շատ, — հարցրեց Զինոչկան ահով և կամացուկ: Նեմովէցկին գիտէր՝ ովքեր էին այդ կանայք, և նա սոսկում էր, որ իրանք ընկել են այդպիսի վատ և վտանգաւոր տեղ, բայց հանդիստ պատասխանեց.

— Զր գիտեմ: Այնպէս: Պէտք չէ նրանց



մասին խօսել: Ահա այժմ կը գնանք այն անտառիկը, իսկ այնուհետև կը լինի դաստաւը և քաղաքը: Ափսոս, որ մենք այսպէս ուշ դուրս եկանք:

Աղչկայ ծիծաղը եկաւ, որ նա ուշ էր ասում, երբ իրանք դուրս էին եկել ժամի չորսին, և նա նայեց պատանու վրայ ու ժպտաց:

Բայց Նեմովէցկու յօնքերը չէին քաշուում, և Զինոչկան առաջարկեց՝ հանգստանելով և մխիթարելով:

— Գնանք աւելի շուտ: Ես թէյ եմ ուզում: Եւ անտառն էլ արդէն մօտիկ է:

— Գնանք:

Երբ նրանք մտան անտառ և ծառերն իրանց կատարներով լուիկ միացան նրանց գլխի վերև, սաստիկ մթնեց, բայց լաւ էր ու հանգիստ:

— Տուէք ձեր ձեռքը, — առաջարկեց Նեմովէցկին: Աղչիկն անվճռաբար տուեց ձեռքը, և թեթև հպումը ասես վանեց խաւարը:

Նրանց ձեռքերն անշարժ էին և չէին սեղմուում, բայց նրանց ողջ ուշքը կենդրոնացած էր մարմնի այդ փոքրիկ տեղի՝ ուր հրպուում էին ձեռքերը, զգացումի վրայ: Եւ նորից ուզում էին խօսել գեղեցկութեան և սիրոյ խորհրդաւոր ոչժի մասին, բայց խօսել

3716 - 82

այնպէս որ չը խանգարուի լուռութիւնը, խօսել ոչ խօսքերով, այլ հայեացքներով: Եւ նրանք մտածում էին որ պէտք է նայել, և ուզում էին էլ, բայց չէին վճռում:

— Բայց ահա նորի՛ց մարդիկ, — ուրախ ասաց Զինոչկան:

III.

Բացատրում, ուր աւելի լուս էր, դատարկուած շէր առջև նստած էին երեք մարդ և լուռ, սպասողաբար, նայում էին մօտեցողների վրայ: Մէկը, որ դերասանի նման ածիլուած էր, ծիծաղեց և սուլեց այնպէս, իբրև թէ այդ նշանակում էր.

— Օ-հօ:

Նեմովէցիու սիրտը թուլացաւ և նուազեց սոսկալի անհանգստութեան մէջ, բայց ետեւից հրուածի պէս՝ նա գնում էր նստած մարդկանց ուղղութեամբ, որոնց մօտից անցնում էր շաւիղը: Նրանք սպասում էին և երեք զոյգ աչքեր մթին էին տալիս՝ անշարժ և զարհուրելի: Եւ աղօտ ցանկութիւն ունենալով դէպ ինքը տրամադրել այդ պատահողուն մուսլ մարդկանց, որոնց լուռութեան մէջ սպառնալիք էր զգացւում, ցոյց տալ իր անօգնա-

կանութիւնը և կարեկցութիւն զարթեցնել նրանց մէջ, նա հարցրեց.

— Ո՞րտեղով անցնել դէպի զաստաւբ: Այստեղով:

Բայց նրանք չը պատասխանեցին: Ածիլուածը սուլեց մի ինչ որ անորոշ և ծաղրելի բան, իսկ միւս երկուսը լուռ էին և նայում էին ծանր, չարագուշակ յամառութեամբ: Նրանք հարբած էին, չարացած և ուզում էին սէր և աւերմունք: Կարծրաթուշ չաղ մարդը բարձրացաւ արմունկների վրայ, չետոյ անվճռաբար, արջի նման՝ յենուեց թաթերի վրայ և ծանր հառաչելով վերկացաւ: Ընկերները հարևանցի հայեացք ձգեցին նրա վրայ և վերրստին նոյն յամառութեամբ բեւեռեցին աչքերը Զինոչկայի վրայ:

— Ես վախենում եմ, — միայն շրթունքներով ասաց Զինոչկան:

Խօսքերը չը լսած, Նեմովէցիին նրան հասկացաւ յենուած ձեռքի ծանրութիւնից: Եւ աշխատելով պահպանել հանդիստ տեսք, բայց զգալով օրհասական անխուսափելիութիւնը այն բանի, որն այժմ պէտք է պատահէր, նա քայլեց հաւասար և հաստատ: Եւ երեք զոյգ աչքերը մօտեցան, փայլեցին և մնացին կռնակի ետև: «Պէտք է փախչել—մտածեց Նեմո-

վէցկին, և ինքն իրան պատասխանեց. — ոչ, փախչել չէ կարելի»:

— Բոլորովին սատկոց աղայ է, մինչև անգամ վիրաւորական է, — ասաց նստողներից երրորդը՝ որն ունէր անօսը կարծրաշէկ մօրուք: — Իսկ աղջիկը գեղեցիկ է, Աստուած ամենքին տայ:

Երեքն էլ ինչ որ դժկամութեամբ ծիծաղեցին:

— Աղայ, սպասիր — երկու խօսք, — թանձր բասով ասաց բարձրահասակ մարդը և նայեց ընկերների վրայ: Սրանք վերկացան: Նեմովէցկին գնում էր ետ չը նայելով:

— Պէտք է սպասել, երբ խնդրում են, — ասաց կարծրաշէկ մարդը:

— Թէ չէ, ախր վզակօթիդ էլ կարելի է տալ:

— Քեզ են ասում, — ծղրտաց բարձրահասակը և երկու ոստնումով հասաւ գնացողների ետևից: Խոշոր ձեռքն իջաւ նեմովէցկու ուստի վրայ և շարժեց նրան, և շուռ գալով, նա հէնց երեսի մօտ հանդիպեց կլոր, ուռուցիկ և ահարկու աչքերի: Նրանք այնպէս մօտիկ էին, ասես նա նայում էր նրանց վրայ խոշորացնող ապակու միջով և պարզ զանազանում էր սպիտակուցի կարմիր երակները և

թերթերուքների դեղնազոյն թարախը: Եւ բաց թողնելով Ձինոչկայի համր ձեռքը, նա ձեռքը դրպանը տարաւ և փնթփնթաց:

— Փող... Առէք փողը: Ուրախութեամբ:

Ուռուցիկ աչքերն աւելի ու աւելի կլորանում էին և փայլում:

Եւ երբ նեմովէցկին դարձրեց նրացից իր աչքերը, բարձրահասակը մի քիչ յետ քաշուեց և առանց ձեռքը տանել-բերելով՝ վարից զարկեց նեմովէցկու կզակին: Նեմովէցկու գլուխը յետ գնաց, ատամները չխկացին, գլխարկն իջաւ ճակատի վրայ և գլորուեց, և ձեռքերը թափահարելով, ընկաւ բերանքսիվեր: Լուռ, առանց կանչելու, շուռ եկաւ Ձինոչկան և սկսեց վաղ տալ, միանգամից ընդունելով այն արագութեամբ, որին միայն ընդունակ էր: Ածիլուած մարդը կանչեց երկար և տարօրինակ.

— Ա.—ա.—ա...

Եւ կանչելով վազեց աղջկայ ետևից:

Նեմովէցկին օրօրուելով բարձրացաւ, բայց դեռ չէր կարողացել ուղղուել, երբ նորից գետին ընկաւ ծոծրակին ստացած հարուածից: Նրանք երկու հողի էին, իսկ նա մենակ էր, թոյլ և կռուի անտվոր, բայց երկար կռուում էր, ցեատում ճանկերով՝ ինչպէս կռուող կին, հեկեկում էր անզօր չուսաբեկութիւնից և

խածոտում: Երբ նա իսպառ թուլացաւ, նրան վերցրին ու տարան. նա ընդդիմանում էր, բայց գլխում աղմկում էր, նա դադարում էր հասկանալուց, թէ ինչ է կատարում իր հետ, և անզօր կախում էր տանող ձեռքերի վրայ: Վերջինը, ինչ որ նա տեսաւ, այդ կարմրաշէկ մորուքի մի կտորն էր, որ համարեա իր բերանն էր մտնում, իսկ նրանից չետոյ՝ անտառի մթութիւնը և վազող աղչկայ բաց գոյնի կօֆտան: Նա վազում էր լուռ և արագ, այնպէս, ինչպէս վազում էր գորէլի խաղալիս, — իսկ նրա ետեւից մանր քայլերներով, ետեւից հասնելով, սլանում էր ածիլուածը: Իսկ չետոյ նեմովէցկին զգաց իր շուրջը դատարկութիւն, սրտագնացութեամբ դլորուեց մի ինչ որ ցած տեղ, դարնուելով գէանին դլրդաց ամբողջ մարմնով — և ուշաթափուեց:

Բարձրահասակը և կարմրաշէկը, որոնք գցեցին նեմովէցկուն փոսի մէջ, կանդնեցին մի քիչ՝ ականջ դնելով, թէ ինչ է կատարում փոսի յատակում:

Բայց նրանց երեսներն և աչքերը դարձրուած էին դէպի միւս կողմ, ուր մնացել էր Զինուկան: Այնտեղից լսուեց կանացի բարձր,

խեղդուած աղաղակ և իսկոյն մարեց: Եւ բարձրահասակը բարկութեամբ բացականչեց.

— Անպիտան, — և անշեղ, արջի նման ճիւղեր կտորելով, վազեց:

— Ե՛ս էլ, — բարակ ձայնով կանչում էր կարմրաշէկը՝ վազ տալով նրա ետեւից: Նա թուլակազմ էր և խիստ հեռում էր, կուռի մէջ ցաւացրել էին նրա ծունկը, և նա վշտացած էր, որ աղչկայ մասին միտքը ամենաառաջ ինքը յղացաւ, իսկ նա բաժին կ'ընկնի իրան ամենավերջը: Նա կանգ առաւ, շփեց ծունկը ձեռքով, մատը քթին դնելով խնչեց և նորից վազեց, աղիողորմ կանչելով.

— Ե՛ս էլ, ե՛ս էլ:

Մթին ամպը արդէն վարագուրել էր ամբողջ երկինքը, և վրայ էր հասել մութ, խաղաղ գիշեր: Մթութեան մէջ շուտով կորաւ կարմրաշէկի կարնիկ կերպարանքը, բայց դեռ երկար լսում էր նրա ոտքերի անհաւասար տփիւնը, դէն հրուած տերեւների շշկոցը և խուլ կերպով զօղանշող աղէկտուր ձայնը.

— Ե՛ս էլ: Եղբայրներ, ե՛ս էլ:

IV.

Նեմովէցկու բերանը հող էր մտել և ճռնչում էր ատամների տակ: Եւ առաջինը,

ամենազօրեղը, ինչ որ նա ուշքի գալով զգաց՝
 դա հողի թանձր և խաղաղ հոտն էր: Գլուխը
 գուլ էր, ասես լցուած պղտոր կապարով, այն-
 պէս որ դժւար էր շրջել. ամբողջ մարմինը մար-
 մաջում էր և սաստիկ ցաւում էր ուսը, բայց
 ոչինչ չէր ջարդուած, չէր կոտորուած: Նեմո-
 վէցկին նստեց և երկար նայում էր վերև, ոչ-
 ինչ չէր մտածելով և չէր չիշելով: Ուղիղ նրա
 վերև կախուած էր մի թուփ՝ լայն սև տերև-
 ներով և նրանց միջից տեղ-տեղ երևում էր
 պարզուած երկինքը: Ամպն անցել էր ոչ մի
 կաթիլ անձրև չէր թափելով և օդը չոր ու
 թեթև դարձնելով. և բարձր՝ երկնքի մէջտե-
 ղում կառնուել էր կիսահաստ լուսնկան պարզ,
 հալչող ծայրով: Նա վերջին գիշերներն էր սպ-
 րում և լուսաւորում էր սառը, ախուր և
 միայնակ: Ամպերի փոքրիկ կտորները արագ
 սլանում էին բարձրում, ուր ըստ երևութիւն
 շարունակում անցնում էր փշել զօրեղ քամի,
 բայց չէին ծածկում լուսինը, այլ զգուշու-
 թեամբ անցնում էին մօտից: Լուսնի մենա-
 կութեան, բարձր, լուսափայլ ամպերի զգու-
 շութեան, ներքեում անդալի քամու սօսա-
 փիւնի մէջ զգացում էր երկրի վրայ թաղա-
 ւորող գիշերի խորհրդաւոր խորութիւնը:
 Նեմովէցկին չիշեց բոլորը, ինչ որ պատա-

հել էր, և չէր հաւատաց: Բայց պատահածն
 այնպէս սոսկալի էր և չէր նմանող ճշմարտու-
 թեան, որը չէ կարող լինել այդպէս սարսա-
 փելի: և ինքը նա, որ նստած էր գիշերուայ
 ժամին և ինչ որ ցած տեղից նայում շրջուած
 լուսնին և վաղու ամպերին, նոյնպէս տա-
 րօրինակ էր և իսկականի նման չէր: Եւ նա
 մտածեց, որ այդ սովորական սոսկալի երազ է,
 խիստ սոսկալի և վատ: Եւ այն կանայք, որոնց
 նրանք այնքան շատ պատահեցին, նոյնպէս
 էրազ էին:

— Անկարելի է, — ասաց նա հաստատա-
 բար և թույլ կերպով շարժեց ծանր գլուխը: —
 Անկարելի է:

Նա մեկնեց ձեռքը և սկսեց փնտրել զըլ-
 խարկը որ դնայ, բայց զլխարկը չէր կար: Եւ
 այն, որ նա չէր կար, պարզեց իսկոյն ամեն ինչ,
 և նա հասկացաւ, որ կատարուածը ոչ թէ
 երազ էր, այլ սոսկալի ճշմարտութիւն: Յաջորդ
 րոպէին, սարսափից նուազելով, նա արդէն
 վեր էր մաղլցում, փլչում էր թափուող հողի
 հետ միասին և վերստին մաղլցում և բռնում
 թփի ճկուն ոստերից:

Պուրս գալով՝ նա վազեց շիտակ, չէր խոր-
 հելով և ուղղութիւն չէր նորելով, և երկար
 վազում էր և պտտում ծառերի մէջ: Նոյնպէս

յանկարծակի, չը խորհելով, նա վազեց դէպի
 միւս կողմը, և նորից ճիւղերը ճանկում էին
 նրա դէմքը, և նորից բոլորը երազի նմանուեց:
 Եւ Նեմովէցիուն թւում էր, թէ մի ժամանակ
 մի նման բան արդէն կատարուել է իր հետ.
 մթուօթիւն, երես ճանկող աներևոյթ ոստեր,
 և նա վազում է աչքերը փակած և կարծում է,
 թէ այդ բոլորը երազ է: Նեմովէցիին կանգ
 առաւ, յետոյ նստեց ուղղակի գետնի վրայ
 նստած մարդու անյարմար և անսովոր դիրքով:
 Եւ դարձեալ նա մտածեց զլիսարկի մասին և
 սասց.

— Ես եմ: Պէտք է սպանեմ ինձ: Պէտք
 է սպանեմ ինձ, եթէ սա նոյն-իսկ երազ է:

Նա վեր ցատկեց և նորից վազեց, բայց
 խելքի եկաւ և զնաց դանդաղ, աղօտ կերպով
 նկարելով մտքում այն տեղը, ուր իրանց վրայ
 յարձակուեցին: Անտառում բոլորովին մուծն
 էր, բայց երբեմն խուժում էր լուսնի դժգոյն
 շողը և խաբում, լուսաւորելով ծառերի սպի-
 տակ բուներ, և անտառը լցուած էր թւում
 անշարժ և չը գիտես թէ ինչու լուսկաց մարդ-
 կանցով: Այդ էլ արդէն մի ժամանակ եղել էր,
 այդ էլ նմանում էր երազի:

— Զինաի՛րա Նիկոլաւնա.— կանչում էր
 Նեմովէցիին և բարձր արտասանում առաջին

խօսքը, բայց կամաց՝ երկրորդը, ասես ծայնի
 հետ միասին կորցնելով իր յոյսը, թէ մէկը կը
 պատասխանէ:

Եւ ոչ ոք չէր պատասխանում:

Յետոյ նա քայլեց շաւղով, ճանաչեց նրան
 և հասաւ մինչև բացատը:

Եւ նա այստեղ դարձեալ, և արդէն բո-
 լորովին հասկացաւ, որ այդ բոլորը ստոյգ է,
 և սարսափի մէջ՝ ընկաւ դէս ու դէն, կան-
 չելով:

— Զինաի՛րա Նիկոլաւնա: Ե՛ս եմ: Ե՛ս:

!!չ ոք չէր պատասխանում և, երեսը
 դարձնելով դէպի այն կողմը, ուր պէտք է
 գտնուէր քաղաքը, Նեմովէցիին բաժան-բաժան
 կանչեց.

— Օգ-նե-ցէ՛ք...

Եւ վերստին դէս ու դէն ընկաւ՝ մի ինչ
 որ բան շնչալով, տնադելով թփերը, երբ հէնց
 իր ոտքերի առաջ յայտնուեց սպիտակ աղօտ
 բիծ, որ նման էր նուազ լոյսի մակարդուած
 բժի: Այդ Զինուչկան էր պառկած:

— Սատու՛ժ. ի՛նչ է սա, — չոր աչքերով
 բայց հեծկլտող մարդու ծայնով սասց Նեմո-
 վէցիին և ծունկ չողելով դիպաւ պառկածին:
 Նրա ձեռքը հանդիպեց մերկացած մարմնի՝

հարթ, ձգական, սառը, բայց ոչ մեռած, և նեմովեցկին սարսափով էտ քաշեց նրան:

— Սիրելիս, աղաւնեակս, ես եմ,— շշնշում էր նա, փնտրելով մթութեան մէջ նրա երեսը: Եւ դարձեալ, ուրիշ ուղղութեամբ նա մեկնեց ձեռքը և նորից հանդիպեց մերկ մարմնի. և այդպէս, ուր էլ նա մէկնում էր նրան, ամենուրեք պատահում էր կանացի մերկ, հարթ, ձգական մարմնի, որն ասես տաքանում էր զիպչող ձեռքի տակ:

Երբեմն նա էտ քաշում ձեռքն արագ, բայց երբեմն ուշացնում էր և ինչպէս ինքը՝ առանց զլխարկի, պատառոտուն, թւում էր իրան ոչ իսկական, այնպէս էլ այդ մերկացած մարմնի հետ նա չէր կարողանում կապել Զինոչկայի կերպարանքը:

Եւ այն, ինչ որ կատարուել էլ այստեղ, ինչ արել էին մարդիկ այդ կանացի անծայն մարմնի հետ, ներկայացաւ նրան իր ողջ նողկոտալի պարզութեամբ— և ինչ որ տարօրինակ, խօսուէն ոյժով արձագանքեց նրա բոլոր անգամներում: Զգուելով այնպէս, որ զրզրճացին յօդերը, նա բթապէս յառեց աչքերը սպիտակ բծին և մտածող մարդու նման կիտեց յօնքերը: Սարսափը կատարուածի առջև սառչում էր նրանում, կծկուելով դունդ էր դառնում

և պառկում հողու մէջ, իբրև մի կողմնակի և անդօր բան:

— Սատուած իմ, ի՞նչ է սա. — կրկնեց նա, բայց ձայնը կեղծ էր, ասես դիտմամբ:

Նա շօշափելով գտաւ սլորաբ. նա զարկում էր թույլ, բայց հաւասար և երբ նա կորացաւ հէնց դէմքին մօտիկ, զգաց թեթեւ շնչառնութիւն, ասես Զինոչկան ոչ թէ խոր ուշադնացութեան մէջ էր, այլ պարզապէս քնած էր: Եւ նա կամացուկ ձայն տուեց նրան.

— Զինոչկա, ես եմ:

Եւ այստեղ իսկ զգաց, որ՝ չը գիտէ թէ ինչու համար, լաւ կը լինի, եթէ նա դեռ երկար ժամանակ չը զարթնի: Շուներ պահելով և արագ աչք ածելով շուրջը, նա զգուշութեամբ շոյեց նրա թուշը և համբուրեց սկզբից փակուած աչքերը, յետոյ շրթունքները, որոնք ամուր համբուրի տակ կակուղ կերպով որոնք ամուր համբուրի տակ կակուղ կերպով լայնացան: Նա վախեցաւ, որ Զինոչկան կարող է զարթել, և ետ օրօրուեց ու շնչատուեց: Բայց մարմինը համբ էր և անշարժ, և նրա անօգնականութեան ու մատչելիութեան մէջ կար մի ինչ որ խղճալի և զրզուող բան, որ ուժով դէպի իրան էր քաշում:

Խորին քնքշութեամբ և գոյի վախկոտ զգուշութեամբ նեմովեցկին շանում էր ձգել

նրա վրայ նրա զգեստի կտորները, և գործ-
 ւածքի ու մերկ մարմնի կրկնակի զգացմունքը
 սուր էր՝ ինչպէս դանակը, և անհասանելի՝
 ինչպէս անմտութիւնը: Նա պաշտպանող էր
 և յարձակուող, և նա օգնութիւն էր փնտրում
 շրջապատող անտառից և մթութիւնից, բայց
 անտառն ու մթութիւնը չէին տալիս այն:
 Այստեղ զազանների խնջոյքն էր և նա, յան-
 կարծակի դէն ձգուած մարդկային, հասկա-
 նալի ու պարզ կեանքից դէպի միւս կողմ,
 հոտոտում էր օդում լցուած կիզիչ հեշտասի-
 բութիւնը և լայնացնում ունդերը:

— Ես եմ: Ես. — անմտաբար կրկնում էր
 նա, չը հասկանալով իրան շրջապատածը և
 ողջ լցուած չիշուղութեամբ այն բանի մասին,
 թէ ինչպէս երբեմն տեսաւ շրջազգեստի սպի-
 տակ շերտը, ոտքի սև սիլուէտը և նրան քրն-
 քշութեամբ զրկող ոտնամանը: Եւ ականջ դնե-
 լով Զինուկայի շնչառութեան, աչքը չը հեռաց-
 նելով այն տեղից, ուր նրա դէմքն էր, նա
 առաջ տարաւ ձեռքը: Ականջ դրեց և աւելի
 առաջ տարաւ:

— Ի՞նչ է սա. — բարձր և յուսահատ բա-
 ցականչեց նա և վեր ցատկեց, սարսափելով
 ինքն իրանից: Վայրկենապէս նրա աչքերում
 փայլեց Զինուկայի դէմքը և չքացաւ: Նա շա-

նում էր հասկանալ, որ այդ մարմինը Զինու-
 կան է, որի հետ նա այսօր գնում էր և որը
 խօսում էր անհունութեան մասին, — և չէր
 կարողանում. նա աշխատում էր զգալ կատար-
 ւածի սարսափը, բայց սարսափը շատ մեծ էր,
 եթէ մտածել, թէ այդ բոլորը ճշմարտութիւն է,
 և նա չէր երեւում:

— Զինաի՞դա Նիկոլաւնա, — կանչեց նա
 աղերսելով: Ախր ինչո՞ւ է սա, Զինաիդա Նի-
 կոլաւնա:

Բայց տանջուած մարմինը մնում էր ան-
 ծայն — անձպտուն, և անկապ խօսքերով՝ Նե-
 մովէցկին իջաւ ծնկների վրայ: Նա աղաչում
 էր, սպառնում, ասում, որ կը սպանէ իրան,
 և դժժում էր պառկածին, վերցնելով շուռ
 տալով, իրան սեղմելով նրան և եղունգները
 համարեա խրելով նրա մարմնի մէջ: Տաքա-
 ցած մարմինը կակղապէս հպատակուած էր
 նրա ճիւղերին, հնազանդութեամբ հետևելով
 նրա շարժումներին, և այդ բոլորն այնպէս
 սոսկալի էր, անըմբռնելի և վայրենի, որ Նե-
 մովէցկին նորից վեր ցատկեց և ընդհատ
 կանչեց:

— Օգնեցէք. — և ծայնը կեղծ էր, ասես
 դիտմամբ:

Եւ դարձեալ նա յարձակուեց չ'ընդդիմա-

ցող մարմնի վրայ՝ համբուրելով, լալով, զգալով իր առջև մի ինչ որ մթին, սարսափելի, դէպի ինքը ձգող անդունդ։ Նեմովէցկին չը կար, Նեմովէցկին մնացել էր ետևում, իսկ նա, որը հիմա կար, տարփալի անողորմութեամբ արորում էր աաքուկ զիչող մարմինը և ասում՝ ժպտալով անմտի խորամանկ քծծաղով։

— Պատասխանիր։ Թէ՞ դու չես ուզում։
Ես սիրում եմ քեզ, սիրում եմ։

Նոյն խորամանկ քծծաղով նա մօտեցրեց յայնացած աչքերը Զինոչկայի հէնց դէմքին և շնչում էր։

— Ես սիրում եմ քեզ։ Դու չես ուզում ասել, բայց դու ժպտում ես, ես այդ տեսնում եմ։ Ես սիրում եմ քեզ, սիրում եմ, սիրում եմ։

Նա աւելի ամուր սեղմեց իրան կակուղ, անկամք մարմինը, որ իր անկենդան զիչողութեամբ վայրենի կիրք էր զարթեցնում, կօտրտում էր ձեռքերը և անհնչիւն շնչում էր, պահպանելով մարդու մի բնութենականութիւնը միայն — ստելը։

— Ես սիրում եմ քեզ։ Մենք ոչ ոքի չենք ասի, և ոչ որ չի իմանայ։ Ես կ'ամուսնանամ քեզ հետ, վաղը, երբ ուզում ես։ Ես սիրում

եմ քեզ։ Ես կը համբուրեմ քեզ և դու ինձ կը պատասխանես — լաւ։ Զինոչկա...

Եւ նա ոչժով սեղմուեց նրա շրթունքներին, զգալով, թէ ինչպէս ատամները թաղուում են մարմնի մէջ, և ցաւից ու համբուրի պնդութիւնից կորցնելով մտքի վերջին նշոյները։ Նրան թուաց, թէ աղջկայ շրթունքները ցնցուեցին։ Մի ակնթարթով փայլատակող հրեղէն սարսափը յուսաւորեց նրա մըտքերը, բանալով նրա զիմաց սև անպունդը։

Եւ սև անպունդը կուլ աուեց նրան։



Handwritten text in Armenian script, appearing as bleed-through from the reverse side of the page.



Additional handwritten text in Armenian script, continuing from the top section.

« Ազգային գրադարան



NL0310514

9862

5991

Յ. ԴԱԻԹԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

- 1. Մ. Գօրկիյ, Մակար Չուգրա,
Թարգմ. Սիմ. Բարիեանի . 10 կոպ.
- 2. Սիմ. Բարիեան, Բանաստեղծու-
թիւններ 20 »
- 3. Լ. Անդրէէ, Անդուէդր,
Թարգմ. Սիմ. Բարիեանի . 10 »

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Դիմել՝ հրատարակչին— Армянскъ (Таврич.
губ.), Ивану Давидову և Կովկասի յայտնի գրա-
փաճառներին: